ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԿԱԼՄԱՄԲ. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Խոսույթը համարվում է կարևորագույն լեզվաբանական կատեգորիաներից մեկը: Բազմաթիվ լեզվաբաններ, ուսումնասիրելով այս "երևույթը", եկել են զանազան եզրահանգումների, որոնցում առկա են ինչպես նմանատիպ սահմանումներ, այնպես էլ իրարամերժ: Ընդհանուր առմամբ դրանք, մեր կարծիքով, միայն լրացնում են միմյանց:

է. Աղայանի արդի հայերենի բացատրական բառարանում «խոսույթ» եզրին առաջարկվում է տալ հետևյալ բնորոշումը՝ «Տվյալ հաղորդակցման պահին ասածը, լեզվի իրական դրսևորումը կազմող խոսք»:[1]

Այս առումով իրավիճակն այլ է ֆրանսերենում, ուր հայերենի խոսույթին համարժեք ֆրանսիական «discours» տերմինը տարբեր հեղինակների և լեզվաբանական դպրոցների կողմից առանձին մեկնաբանման է արժանանում՝ նրան (խոսույթին) վերագրվող զանազան գործառույթներ ենթադրող սահմանումներով:

Այդ մեկնաբանություններից մեկի համաձայն՝ խոսույթը խոսքային գործունեությունն է, խոսողի կողմից կիրառվող լեզուն: Այս մոտեցման կողմնակիցն է շվեյցարացի լեզվաբան Ֆերդինանդ դը Սոսյուրը, ում կարծիքով՝ դիսկուրսը իր կատարած դերով նույնանում է խոսքի հետ:[2]

Մեկ այլ բնորոշմամբ՝ խոսույթը նախադասության տարր է (է. Բենվենիստը գտնում էր, որ նախադասության կազմում լեզուն դադարում է նշանային համակարգ լինելուց, և անցում է կատարվում դիսկուրսի բնագավառ, որտեղ լեզուն գործառնում է որպես հաղորդակցման միջոց):[3]

Պ. Շարոդոյի և Դ. Մենգընոյի խոսույթի վերլուծության բառարանում «խոսույթը» ներկայացված է դասական հակադրությունների շարքով, մասնավորապես խոսույթ\նախադասություն, խոսույթ\ լեզու, խոսույթ\տեքստ, խոսույթ\ասույթ.[4]

Մի շարք լեզվաբաններ, որոնց թվում է նաև Մ. Ֆուկոն, դիսկուրսը դիտում են որպես *միևնույն ծագումն ունեցող* ասույթների ամբողջականություն: Այս տեսանկյունից խոսույթը կարող է նշանակել մի համակարգ, որն *իրենից տեքստերի այսպիսի կամ այնպիսի ամբողջություն է ներկայացնում*: Օրինակ տարբերակման են ենթակա լրագրողական խոսույթը, վարչական խոսույթը, համալսարանական խոսույթը և այլն:[5]

Միշել Պեշյոն իր հերթին դիսկուրսն ուսումնասիրում է Սոսյուրի կողմից առաջ քաշված մոտեցման տեսանկյունից, որի հիմքում լեզուն է որպես *ֆորմալ*

հարաբերությունների համակարգ, վերացարկված իր գործածությունից, պատմությունից և բովանդակությունից, որոնք պատկանում են խոսքի տիրույթին: Պեշյոն իր առջև նպատակ է դնում խոսույթի գիտական տեսություն հիմնել պնդելով փորձնական (և ոչ միայն *ներքմբռնողական*) արդյունքներ ստանալու նպատակով «գործիք» զարգացնելու անհրաժեշտության վրա: Նրա գերակա խնդիրն է պարզել, թե ինչպես են «իմաստն» ու *«սյուժեն»* արտահայտվում խոսույթի համատեքստում: Հեղինակը մատնանշում է, որ այնպիսի հարցադրումներն, ինչպիսիք են «Ի՞նչ է նշանակում այս տեքստը» և այլն, պարբերաբար դուրս են մնում լեզվաբանության ուսումնասիրության շրջանակներից, ուստիև մեծապես կարևորում է քննարկվող տեքստի և դրա իմաստային լեցունության հարաբերակցության հարցը: [6]

Ըստ Ժան-Միշել Ադամի «դիսկուրս» բառը պետք է միշտ որպես հոգնակի դիտարկվի: Երբ ասում են հրապարակախոսական կամ քաղաքական խոսույթ, նկատի են ունենում տվյալ հասարակախոսութային *դաշտին* հատուկ խոսութային գործունեությունը, որը լրագրողական, քաղաքական, գրական և այլ խոսույթների տարբեր ժանրերի տեսք է ստանում: [7]

Հաշվի առնելով նշված ուղղություններում իրականացված ուսումնասիրությունները, ինչպես նաև ցանկացած խոսույթում իմաստի և սյուժեի փոխկապակցվածության վրա հիմնվելու գերակա նպատակը Պեշյոն, Ադամը և այլ մասնագետներ, դիսկուրսը դիտարկելով որպես տեքստերի ամբողջություն, անդրադարձան մի բնագավառի, որը, մեր կարծիքով, գտնվում է լեզվաբանության և հասարակական գիտությունների «խաչմերուկում». խոսքը քաղաքական խոսույթի մասին է: Այս կետում *հարկ է* հիշատակել, որ 1960-1970 թվականներին Ֆրանսիայում գերիշխող խոսույթի վերլուծության ուղղությամբ հետազոտությունների միջուկն էր հանդիսանում քաղաքական խոսույթը, որը սկզբնապես առաջարկվում էր ուսումնասիրել կառուցվածքային լեզվաբանությունը և գաղափարախոսության տեսությունը միակցող մեթոդաբանությամբ:

Մեր ուսումնասիրության մեջ մենք ելնում ենք լեզվաբան է. Կոսերիուի այն մտքից, ըստ որի խոսքն ինքնին, ներկայացված լինելով որպես լեզվաօգտագործողների միջև համերաշխության նշան, «քաղաքականապես բեռնված է»: [8]

Քաղաքական ֆենոմենը բարդ կառուցվածք է: Ինչպես ասում է Կլոդ Լը Ֆորը, այն բխում է փաստերի ամբողջությունից, որոնք կարգով տարբեր են, բայց միաժամանակ մշտապես խաչաձևվում են. դրանք են քաղաքական իրողությունները, հասարակական իրողությունները, իրավական և բարոյական իրողությունները: [9]

Վերոնշյալը ենթադրում է, որ քաղաքական ֆենոմենն անպայմանորեն պետք է տարբեր գիտական բնագավառների ուսումնասիրության առարկա հանդիսանա *քաղաքագիտության*, որը *հետաքրքրվում է* քաղաքական իրողու-

թյուններով, *քաղաքական սոցիոլոգիայի*, որը զբաղվում է հասարակական իրողությունների ուսումնասիրությամբ, *իրավագիտության* (իրավական իրողություններ), *քաղաքական փիլիսոփայության*, որն *անդրադառնում է* բարոյական իրողություններին:

Պ. Շարոդոն, հիմք ընդունելով Մ. Պեշյոյի գերակա գաղափարներից մեկը, փաստում է, որ քաղաքական խոսույթը (ինչպես և խոսույթի ցանկացած այլ տեսակ) գործողությունից դուրս իմաստազուրկ է, իսկ գործողության մեջ քաղաքական սյուժեի համար (ինչպես և ցանկացած այլ սյուժեի) «իշխանություն է իրականացվում\իրացվում»:[10]

Բրեմենի համալսարանի դասախոս Մ. Նոնհոֆը նկատում է, որ մինչև վերջերս այն ոլորտը, որն ի սկզբանե քաղաքական խոսույթի ուսումնասիրության տեսանկյունից ամենահետաքրքրական էր համարվում քաղաքագիտությունը, խիստ մակերեսորեն է անդրադարձել այս թեմային դրանով իսկ հնարավորություն տալով լեզվաբանությանը «բացահայտելու այս բնագավառը»: [11]

Եվրոպացի գիտնականները, ովքեր դժվարանում են որոշակիացնել քաղաքական խոսույթի «գտնվելու վայրը», առաջարկում են վերջինս դիտարկել մի քանի տեսանկյունից.[8]

• *զուտ լեզվաբանական*- ինչպես և ցանկացած այլ տեքստ (բայց և այնպես չմոռանալով ուշադրություն դարձնել *մեկնաբանողին* բնորոշ քաղաքական և գաղափարախոսական հայեցակարգերին)

• *հասարակահոգեբանական*- որն օգնում է հետազոտողին գնահատել խոսողի ակնհայտ կամ թաքնված քաղաքական նպատակների իրականացման արդյունավետությունը

• *անհատական-հերմենևտիկ*-այն դեպքում, երբ լեզվաբանը ցանկանում է ուսումնասիրել խոսույթի հեղինակի կամ մեկնաբանողի անհատական բնորոշ հատկանիշները տրված հանգամանքներում:

Շարունակելով խոսել քաղաքական խոսույթի արդյունավետության մասին մենք պետք է հաշվի առնենք այն փաստը, որ խոսույթի նպատակը համոզելը, հասցեատիրոջ մեջ մտադրություններ արթնացնելը և նրան գործողության դրդելն է:[11]

Խոսքն ընդհանրապես և մասնավորապես քաղաքական գործչի խոսքն ազդում է և ազդեցություն է կրում այն հաղորդակցական իրադրությունից, որում տեղի է ունենում: Խոսքի նպատակը, ուստիև ռազմավարությունը տարբերվում են ըստ խոսողի հաղորդակցական մտադրությունների կախված այն բանից, թե պետք է ուղղակի տեղեկացնել, գայթակղել *թե* համոզել լսողին, որը կարող է դիտարկվել որպես խոսքային ակտի թիրախ:

Պ. Շարոդոն այդ առիթով հիշատակում է *քաղաքական ասելիքի* գործունեությունը, որը համապատասխանում է հասարակական միջավայրի լայն դաշտում բանավեճի նպատակին, որով հնարավոր է դառնում տեսակետների

փոխանակումը, և *քաղաքական անելիքը*, որը համապատասխանում է որոշման կայացման նպատակին խոսքային ակտերի իրացման ավելի սեղմ տարածական դաշտի շրջանակներում:[9]

Եթե յուրաքանչյուր խոսքային «արտադրանք» իր նշանակությամբ կախված է սոցիալական վերջնանպատակներից, ապա կարելի է ասել, որ գործ ունենք խոսքային գործունեության երկու տեսակի հետ. մեկը վերաբերում է գաղափարներին և դրանց ճշմարտացիության ուժին (վայր, որտեղ ստեղծվում են գաղափարախոսությունները) -դա *քաղաքական տարրն է*. մյուսը վերաբերում է գործող անձանց և նրանց գործողության ուժին (վայր, որտեղ ստեղծվում են ուժային հարաբերությունները) -սա *քաղաքականությունն է*.[9] Ահա տեսնում ենք, թե ինչպես քաղաքական դաշտում խոսքային գործունեությունը կապվում է գործողության հետ:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ կարևոր ենք համարում հավելել, որ քաղաքական գործիչը լրատվամիջոցների «արտոնյալ գործող անձն է»: Նրա յուրաքանչյուր ելույթին հետևում են անթիվ մեկնաբանություններ և հարցումներ, որոնք անմիջապես մատուցվում են ունկնդիրներին և ընթերցողներին: Եթե նա որևէ անհարկի պատասխան տա, անհամոզիչ երևա, չկարողանա ներշնչել այն վստահությունը, որ պատրաստ է պրոբլեմներ լուծել, վերահսկել իրավիճակը, ապա նա միավորներ կկորցնի, որը կարող է գործչի վրա թանկ նստել հատկապես ընտրությունների նախաշեմին: Քաղաքական գործչի համար շատ կարևոր է իմանալ խոսքի տարբեր ոճերի կանոնները, որովհետև նա պետք է ոչ միայն լավ խոսի, այլև ճշգրիտ, իրավիճակին համապատասխան, ինչպես նաև անմիջական թվա անձնական կյանքին, նախասիրություններին վերաբերող հարցերին պատասխանելիս: Կարևոր է նաև արդյունավետ օգտագործել հատկացված ժամանակը: Քաղաքական գործիչը պետք է փորձի արտահայտել իր ինքնատիպությունը, յուրահատկությունը, խոսքի անհատական ոճ կիրառել: Եվ ի վերջո, այն անձը, որը մուտք է գործում քաղաքականության լայն ասպարեզ, ոչ միայն պետք է խոսքի մեծ վարպետ լինի, այլև ձեռնհաս տարբեր բնագավառներում:

Սույն վերլուծությունը թույլ տվեց հանգել այն եզրակացության, որ քաղաքական խոսույթը չի կարող քննարկվել ուսումնասիրության մեկ առարկայի շրջանակներում: Քաղաքական լեզուն ինքնին տարբերվում է սովորական հաղորդակցության լեզվից այնպիսի կարևոր չափանիշներով, ինչպիսիք են եզրաբառերով ներկայացված քաղաքական բառապաշարը, խոսույթի յուրատիպ կառուցվածքը և կիրառությունը իր հնչյունաբանական ձևավորմամբ կամ գրավոր տեսքով:

Ինչպես արդեն նշել ենք, քաղաքական խոսույթը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից և ուրեմն պետք է ընկալվի որպես բազմաթիվ հումանիտար գիտությունների ուսումնասիրության առարկա: Այս փաստը մեզ հնարավորու-

թյուն է տալիս ավելի հեռուն գնալ մեր ուսումնասիրություններում և քաղաքական խոսույթը ներկայացնել որպես առանձին բնագավառ: Մենք այդ եզրահանգմանն ենք գալիս իրականացված ուսումնասիրության շնորհիվ, որի ընթացքում մեզ հաջողվեց ընդգծել այն կարևոր բնորոշ հատկանիշները, որոնք վկայում են քաղաքական խոսույթի լեզվաբանական և հասարակական ծագման մասին: Սկզբնապես ուսումնասիրվելով միայն լեզվաբանության, մասամբ նաև քաղաքագիտության կողմից քաղաքական խոսույթն իրականում ներկայանում է որպես ավելի բարդ երևույթ, քանզի իր ամբողջության մեջ վերլուծության ենթարկվելով, պարզ է դառնում, որ վերջինիս բովանդակությունը չի սահմանափակվում նշված բնագավառների բաղկացուցիչներով: Դրանց են հավելվում բազում գործոններ, ինչպիսիք են հույզը, հռետորի խոսքի տեմպը, լսարանը և այլն: Դա ցույց է տալիս, որ քաղաքական խոսույթը պարունակում է ոչ միայն լեզվաբանական և քաղաքականությանը հատուկ տարրեր, այլև հոգեբանական, սոցիոլոգիական, լրագրողական, տնտեսագիտական և այլ հայեցակերպեր, որոնք միասնականության մեջ հանդես են գալիս միայն առանձին գիտական բնագավառի շրջանակներում, ինչպիսին է քաղաքական խոսույթը:

Ծանոթագրություններ

1. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, 1972.
2. **Ducrot, O., Schaeffer, J.-M.** *Nouveau dictionnaire encyclopédique des sciences du langage*, Paris, 1995.
3. Benveniste, E. *Problemes de linguistique génerale*, 2. Gallimard Paris, 1974.
4. **Charaudeau, P., Maingueneau, D.** *Dictionnaire d'analyse du discours*, **Paris, 2002.**
5. **Foucault, M.,** *Les Mots et les Choses: une archéologie des sciences humaines*, 1966.
6. **Pêcheux, M.,** *L'analyse automatique du dsicours*, **Paris, 1969.**
7. **Adam, J.-M.** *Les genres de discours aux textes*, *Linguistique textuelle*, Paris, Nathan, 1999.
8. **Демьянков, В.З.** *Политический дискурс как предмет политологической филологии, //* **Политическая наука. Политический дискурс: История и современные исследования. М.: ИНИОН РАН, 2002. №3.**
9. **Charaudeau**, *P. Le discours politique ou le pouvoir du langage*, **Paris, 2007.**
10. **Nonhoff, M.** L'analyse hégémonique, à propos du développement récent de l'analyse de discours politique dans les sciences politiques, 2007.
11. **Bayley, P.** *Live oratory in the television age : The language of formal speeches*, **Bologna, 1985.**